«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 1851 «05» 02 2021թ.

2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԵՊՀ-Ի ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ԵՊՀ-ի ռեկտորի պաշտոնակատարի ս/թ փետրվարի 04-ի №19 §3 հրամանը՝

Հրամայում եմ

1. 2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում (ս/թ փետրվարի 8-ից) ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղում սահմանել ուսումնական գործընթացի կազմակերպման հետևյալ կարգը.

1) Ուսումնական գործընթացը կազմակերպել առկա և հեռավար ձևերի համադրությամբ:

2)Առկա և առցանց դասընթացները կազմակերպել համաձայն դասացուցակի: Դասերի սկիզբը սահմանել 9^{30}–ը: Դասերի տևողությունը սահմանել 80 րոպե՝ 5 րոպե դասամիջոցով:

3)Առկա և առցանց դասընթացների ուսումնական նյութերը հասանելի դարձնել ուսանողներին:

4)առցանց դասընթացներն անցկացնել բացառապես https://www.ZOOM.us հարթակում (համալսարանական):

5)Առկա և առցանց ձևերով դասերի անցկացման օրերը չպետք է համընկնեն:

6) Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածմամբ պայմանավորված՝ կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանումներում կանխարգելման նպատակով կիրառվող հակահամաճարակային կանոնների պահպանման նկատմամբ հսկողությունը վերապահել համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին:

2.Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին և ուսանողներին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ս/թ փետրվարի 8-ից:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 1852 «05» 02 2021թ.

2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՏԱԽՏԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածմամբ պայմանավորված՝ մասնաճյուղում 2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ուսումնական գործընթացը առկա և առցանց ձևերի համադրությամբ կազմակերպելու կապացությամբ.

Հրամայում եմ

դասերի անցկացման համար առաջնորդվել ներքոհիշյալ ժամատախտակով՝

I դաս	9 30	-	10 10
	10 15	-	10 55
II դաս	11 05	-	11 45
	11 50	-	12 30
III դաս	12 50	-	13 30
	13 35	-	14 15
IV դաս	14 25	-	15 05
	15 10	-	15 50

Սույն հրամանի մասին սահմանված կարգով իրազեկել մասնաճյուղի դեկանատներին, Հեռակա ուսուցման և ՏՀՍԶ բաժինների աշխատակիցներին, ուսանողներին:

Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ս/թ փետրվարի 8-ից:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ